ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՋՄԱՆՅԱՆ ԱՆԻ ԳԱԳԻԿԻ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ. Հ. Պետրոսյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Ա. Մարդոյան**
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Ա. Աշիկյան**
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հուլիսի 9-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52ա, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. մայիսի 27-ին:

Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Փ. Ղազարյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում շարունակաբար իրականացվող բարեփոխումները պահանջում են դրանց արդյունավետ նախաձեռնում և Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) բոլոր երկրների կողմից համաձայնեցված նպատակների և պարտավորությունների լիարժեք իրականացում: Որակավորումների ազգային շրջանակի մշակումը հատուկ կարևորություն ստացավ Բոլոնիայի անդամ երկրների համար հատկապես 2005թ. Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի (ԵԲԿՏ ՈՇ) և 2008թ. հարատև կրթության համար որակավորումների եվրոպական շրջանակի (ՈԵՇ) հաստատումից հետո: Այս երկու ընդհանրական շրջանակների մշակմամբ սահմանվեց ԵԲԿՏ-ում որակավորումների ազգային շրջանակների մշակման ու կիրառման անհրաժեշտությունն ու վերջիններիս համապատասխանեցման հավաստումը ԵԲԿՏ ՈՇ-ի (ինքնահավաստում) և ՈԵՇ-ի հետ: Ինքնահավաստման միջոցով առավել արժևորվում է որակավորումների ազգային շրջանակների դերը կրթության որակի ապահովման գործընթացների համատեքստում, ինչպես նաև երաշխավորվում է միջազգային մակարդակում որակավորումների ազգային շրջանակի և այնտեղ ներառված որակավորումների ճանաչելիությունն ու դրանց նկատմամբ վստահության բարձրացումը ԵԲԿՏ անդամ երկրներում: ՀՀ-ում ևս մշակվեց և ներդրվեց որակավորումների ազգային շրջանակ (ՀՀ ՈԱՇ), սակայն այն սկսեց կիրառվել հիմնականում բուհերի կողմից, մինչդեռ գործատուների համար այն ևս պետք է ծառայեր որպես արդյունավետ գործիք կադրերի համալրման գործընթացում ըստ կրթական աստիճանի հավանական թեկնածուների համապատասխան գիտելիքների, հմտությունների ու կարողությունների մասին պատկերացում կազմելու համար: Այսպիսով, կրթական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս ՀՀ ուսումնական հաստատությունները սկսեցին որոշակիորեն հիմնվել ՀՀ որակավորումների ազգային շրջանակի վրա: Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում հիմնականում դիտարկվել են ՀՀ ՈԱՇ-ի բարձրագույն կրթության վեցերորդ և յոթերորդ մակարդակները՝ հաշվի առնելով հետազոտության նպատակն ու բովանդակային շրջանակը՝ ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման հիմնախնդիրների ուսումնասիրումը մասնագիտական կրթության որակի ապահովման համատեքստում: Այնուամենայնիվ ՀՀ-ում դեռևս առկա է ՈԱՇ-ի ոչ լիարժեք

կիրառման ու ինքնահավաստման խնդիրը: Մասնավորապես, բուհերում ՀՀ ՈԱՇ-ի կիրառման և ՈԱՇ-ի բնութագրիչների հիման վրա կրթական վերջնարդյունքների մշակման հիմնախնդիրները շարունակում են մնալ չլուծված թե՛ մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակությունների ու կառավարման, թե՛ մանկավարժական մոտեցումների կիրառման տեսանկյունից: ՀՀ բուհերում դեռևս առկա են ՈԱՇ-ի արդյունավետ ու համապարփակ կիրառումը սահմանափակող ազգային, մշակութային ու ինստիտուցիոնալ խնդիրներ, որոնք հաճախ չեն արտացոլվում բուհերի գործունեության բարելավմանն ուղղված ծրագրերում ու գործընթացներում: Հիշյալ խնդիրները հիմնականում վերաբերում են ազգային մակարդակում ՀՀ ՈԱՇ-ի կիրառման ոչ միասնականացված մեխանիզմների գործադրմանը, թույլ վերահսկողությանն ու դերակատարների գործառույթների անհստակությանը, ինչպես նաև ՀՀ բուհերի կողմից իրականացվող կրթական ծրագրերի վերջնարդյունքների և ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների ոչ լիարժեք համապատասխանությանը: Այս խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում է ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում կրթության կառավարման և մանկավարժական մոտեցումների արդիականացում՝ միտված ՀՀ ՈԱՇ-ի կիրառման արդյունավետության ու վերջնարդյունքահենք կրթության խթանմանը: ՀՀ ՈԱՇ-ի արդյունավետ իրականացումն ու ԵԲԿՏ ՈՇ-ի հետ համապատասխանության հաստատումը (ինքնահավաստումը) կարող են էապես նպաստել նաև ՀՀ–ում մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավմանը, որակավորումների հանդեպ հանրության վստահության ու միջազգային մակարդակում համադրելիության և ճանաչելիության բարձրացմանը: Հիշյալ դրույթներով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել և հիմնավորել ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման առանցքային դերը մասնագիտական կրթության որակի շարունակական ապահովման գործընթացներում:

Ելնելով առաջադրված նպատակից՝ դրվել են հետազոտության հետևյալ **խնդիրները՝**

1. Ուսումնասիրել որակավորումների մետաշրջանակների և ազգային շրջանակների ստեղծման նախադրյալներն ու դրանց պատմական զարգացումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում:

2. Դիտարկել որակավորումների ազգային շրջանակների միջազգային փորձը և իրականացնել համեմատական վերլուծություն ՀՀ-ում առկա փորձի հետ:
3. Բացահայտել ՀՀ որակավորումների ազգային շրջանակի դերը վերջնարդյունքահեն կրթության համատեքստում:
4. Ուսումնասիրել ՀՀ բուհերում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման մոտեցումները՝ միտված կրթական վերջնարդյունքների համապատասխանեցմանը ՀՀ որակավորումների ազգային շրջանակին:
5. Հիմնավորել ինքնահավաստման նշանակությունը մասնագիտական կրթության որակի ապահովման տեսանկյունից:
6. Ուսումնասիրել և վերլուծել ՀՀ որակավորումների ազգային շրջանակի զարգացման ուղիներն ու ինքնահավաստման փորձը, բացահայտել առկա հիմնախնդիրներն ու ինքնահավաստման արդյունավետ իրականացման խոչընդոտները:
7. Մշակել ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդել:

Հետազոտության գիտական նորույթը

1. Բացահայտվել են որակավորումների մետաշրջանակների և որակավորումների ազգային շրջանակների փոխկապակցվածությունն ու հիմնական առանձնահատկությունները:
2. Բացահայտվել ու համադրվել են որակավորումների ազգային շրջանակների մշակման միջազգային փորձի առանձնահատկությունները:
3. Հետազոտվել և նորովի դիտարկվել են ՀՀ բուհերում որակավորումների ազգային շրջանակին համապատասխան կրթական վերջնարդյունքների մշակման մանկավարժագիտական մոտեցումները:
4. Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա մշակվել են այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան համապատասխանեցնել բարձրագույն կրթության ոլորտում շնորհված որակավորումները ՀՀ որակավորումների ազգային շրջանակին:
5. Բացահայտվել ու խմբավորվել են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման խոչընդոտները:
6. Մշակվել է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդել:
7. Սահմանվել են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման դերակատարների գործառույթները՝ հստակեցնելու

ինքնահավաստման կարևորությունը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները

1. Որակավորումների ազգային շրջանակների մշակման և կիրառման արդյունավետությունը պայմանավորված է դրանց հիմքում որակավորումների մետաշրջանակների բնութագրիչների կիրառմամբ, կրթության ազգային առանձնահատկությունների շեշտադրմամբ և ազգային մակարդակում համապատասխան դերակատարների գործառույթների պատշաճ իրականացմամբ ու փոխադարձ համագործակցությամբ:
2. Միջազգային փորձի ուսումնասիրությունն օժանդակում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի կիրառման ընթացակարգերի մշակմանն ու արդյունավետ կիրառմանը:
3. Բուհերում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման համար սահմանված ինստիտուցիոնալ կանոնակարգերի, ներբուհական կարգերի, ընթացակարգերի ու մեթոդական ուղեցույցների մասնակի մշակվածությունն ու կիրառումը խոչընդոտում է վերջնարդյունքահենք մոտեցման արդյունավետ կիրառմանն ու կրթական վերջնարդյունքների համապատասխանեցմանը ՀՀ որակավորումների ազգային շրջանակին:
4. Բարձրագույն կրթության ոլորտում շնորհված որակավորումները ՀՀ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցնելու մեխանիզմների կիրառման միջոցով հնարավոր է ապահովել ուսումնառողների կրթության շարունակականության ու շարժունության հնարավորությունների ընդլայնման խթանումը:
5. ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման հիմնախնդիրների լուծումն ու խոչընդոտների հաղթահարումը պահանջում են արդիական մոտեցումների համալիր կիրառում, որոնք կերաշխավորեն ՀՀ ՈԱՇ-ի կիրառման և ինքնահավաստման արդյունավետությունը:
6. ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման համար անհրաժեշտ է միջազգային լավագույն փորձի հիմքի վրա մշակված մոդել, որը կարտացոլի ՀՀ կրթության համակարգի առանձնահատկությունները, ինքնահավաստման գործընթացում ներգրավված դերակատարների գործառույթներն ու փոխհամագործակցությունը և կհամակցի մանկավարժագիտական արդի մոտեցումները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Սույն հետազոտության շրջանակներում առկա գրականության, հոդվածների, պաշտոնական զեկույցների, ուղեցույցների և գիտամեթոդական աղբյուրների ուսումնասիրության արդյունքներով հստակեցված են որակավորումների ազգային շրջանակների դերն ու նշանակությունը մասնագիտական կրթության զարգացման և որակի ապահովման համատեքստում, որակավորումների ազգային շրջանակների մշակման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները, վեր են հանվել ՀՀ բուհերում կրթական վերջնարդյունքները որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցնելու խնդիրները, տեսականորեն վերլուծության են ենթարկված ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման իրականացման հիմնախնդիրները՝ լրացնելով խնդրո առարկա ոլորտում տեսությունը և մանկավարժագիտական մոտեցումները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել ՀՀ-ում Բոլոնիայի հռչակագրի իրականացման և բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխման գործընթացներում և խթանել ազգային, ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում ՀՀ ՈԱՇ-ի լիարժեք ու արդյունավետ կիրառմանը: Հետազոտության գործնական նշանակությունը հատկապես արտացոլվում է ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված մոդելի միջոցով: Մոդելը կարող է օգտակար լինել բարձրագույն կրթության ոլորտի և ՀՀ ՈԱՇ-ի գործադրման հիմնախնդիրներով զբաղվող դերակատարների, մասնագիտական կրթական քաղաքականության մշակողների, բարձրագույն և միջին ուսումնական հաստատություններում կրթական ծրագրեր մշակողների, կրթության որակի ապահովման հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների ու կառույցների, կրթության որակի ապահովման և բուհերի հավատարմագրման վերաբերյալ դասախոսություններ կարդացողների, կրթության որակի ապահովման ուղղությամբ կադրեր վերապատրաստողների և այլ շահագիգիռ կողմերի համար:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 137 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Որակավորումների շրջանակները և դրանց մշակման մեթոդաբանությունը»**, բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ համընդհանուր ձևով ներկայացվում են որակավորումների շրջանակների տեսակներն ու զարգացման նախադրյալները, որակավորումների մետաշրջանակների հիման վրա որակավորումների ազգային շրջանակների մշակման ազգային ու միջազգային փորձը:

Առաջին ենթագլխում՝ «Որակավորումների շրջանակների զարգացման պատմական ակնարկ», քննարկվում են որակավորումների շրջանակների մշակման անհրաժեշտությունն ու զարգացման նախադրյալները, ինչպես նաև ներկայացված են որակավորումների շրջանակների համընդհանուր նպատակները: Ներկայացված է որակավորումների շրջանակների դասակարգումն ըստ իրենց նպատակների՝ որակավորումների մետաշրջանակներ, որակավորումների ազգային շրջանակներ, որակավորումների ոլորտային (սեկտորալ) շրջանակներ:

Որակավորումների մետաշրջանակներն այն ընդհանրական շրջանակներն են, որոնք մշակված են ԵԲԿՏ-ում որակավորումների ազգային շրջանակները միասնականացնելու նպատակով: Մետաշրջանակները հանդիսանում են մեթոդաբանական հենք որակավորումների ազգային շրջանակների մշակման և դրանց համադրելիության ապահովման համար: Այս շրջանակների միջոցով արտահայտվում են ընդհանրական գիտելիքը, կարողություններն ու հմտությունները՝ որպես ուղղորդիչ դասակարգումներ: Որակավորումների մետաշրջանակներն են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակը (ԵԲԿՏ ՈՇ) և Որակավորումների եվրոպական շրջանակը հարատև կրթության համար (ՈԵՇ):

Որակավորումների ազգային շրջանակները սահմանում են ընդհանուր չափանիշներ ազգային մակարդակում շնորհվող որակավորումների համար, դյուրացնում են որակավորումների ճանաչումն ու տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում ուսումնառողների տեղաշարժն ու առաջընթացը:

Որակավորումների ոլորտային (սեկտորալ) շրջանակներն այն շրջանակներն են, որոնք մշակվում են ազգային մակարդակում տվյալ ոլորտի որակավորումների համար: Այս շրջանակները համահունչ են որակավորումների ազգային շրջանակին, և այս դեպքում հաշվի են առնվում թիրախային ոլորտի առանձնահատկությունները:

Տվյալ ենթագլխում մանրամասն ներկայացվում են որակավորումների շրջանակների յուրաքանչյուր տեսակն ու դրա առանձնահատկությունները:

Երկրորդ ենթագլխում՝ «Որակավորումների եվրոպական շրջանակը որպես որակավորումների ազգային շրջանակների մշակման մեթոդաբանական հենք», անդրադարձ է կատարվում որակավորումների եվրոպական շրջանակին, ներկայացվում է նրա նպատակը, կառուցվածքը, մակարդակի վերջնարդյունքների բնութագրիչները: Մանրամասն նկարագրվում է որակավորումների եվրոպական շրջանակի դերը որակավորումների ազգային շրջանակների մշակման գործընթացում: Որակավորումների ազգային շրջանակները մշակվում են ազգային մակարդակներում, սակայն նրանց հիմնական նպատակներից մեկն է նաև միջազգային մակարդակում որակավորումների համադրելիության ապահովումը, այսինքն՝ տվյալ ազգային միջավայրում շնորհված որակավորումների ճանաչումը միջազգային մակարդակում և ուսանողների շարժունության ապահովումն ու ընդլայնումը: Արտացոլելով յուրաքանչյուր երկրի կրթական համակարգի առանձնահատկությունները և միևնույն ժամանակ որպես հիմք ընդունելով ՈԵՇ-ը՝ որակավորումների ազգային շրջանակներն ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ և առանձնահատկություններ, որոնք ևս քննարկվում են տվյալ ենթագլխում:

«Որակավորումների ազգային շրջանակների մշակման միջազգային փորձի վերլուծություն» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացվում են Բելգիայի, Իռլանդիայի ու Գերմանիայի որակավորումների ազգային շրջանակներն ու դրանց մշակման մեթոդաբանությունը: Նկարագրվում են վերոնշյալ երկրների որակավորումների ազգային շրջանակների առանձնահատկություններն ու զարգացման ընթացքը: Տվյալ ենթագլխում ներկայացվում է նաև ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՀՀ ՈԱՇ) մշակման գործընթացն ու զարգացման փուլերը: ՀՀ ՈԱՇ-ը որակավորումների բազմամակարդակ համակարգ է, որը կիրառվում է ՀՀ-ում շնորհվող որակավորումները նկարագրելու և դրանց միջև փոխհարաբերությունները սահմանելու համար (գործող ՀՀ ՈԱՇ-ը հաստատվել է ՀՀ Կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N

714-Ն որոշմամբ): ՀՀ ՈԱՇ-ը բաղկացած է կրթության ութ մակարդակներից, և ինչպես Բելգիայի, Գերմանիայի և Իռլանդիայի որակավորումների ազգային շրջանակները, ՀՀ ՈԱՇ-ը նույնպես մշակվել է վերջնարդյունքահենք մոտեցման կիրառմամբ: Համեմատական վերլուծություն է իրականացվում նաև Իռլանդիայի, Բելգիայի ու Գերմանիայի որակավորումների ազգային շրջանակների ու դրանց կիրառման գործընթացների և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ու դրա կիրառման գործընթացի միջև: Ներկայացվում է ՀՀ ՈԱՇ-ի ու ՈԵՇ-ի մակարդակների համադրությունը:

Երկրորդ գլուխը՝ **«ՀՀ որակավորումների ազգային շրջանակը որպես մասնագիտության կրթական ծրագրերի մշակման մեթոդաբանական հիմք»**, բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ ներկայացվում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի մշակման գործընթացը, քննարկվում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի դերակատարությունը ՀՀ բուհերում կրթական ծրագրերի մշակման ու վերջնարդյունքների սահմանման տեսանկյունից:

Առաջին ենթագլխում՝ «Որակավորումների ազգային շրջանակների դերակատարությունը վերջնարդյունքահենք կրթության կազմակերպման և իրականացման գործընթացում», հիմնավորվում է որակավորումների ազգային շրջանակների կարևորությունը վերջնարդյունքահենք կրթության կազմակերպման ու իրականացման գործընթացում, և ներկայացվում է, թե ինչ է որակավորումը, ինչպես են ձևակերպվում կրթական վերջնարդյունքները:

Հատկանշական է, որ որակավորումների ազգային շրջանակներն իրականացնում են կարևոր գործառույթ թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում: Ազգային մակարդակում ՈԱՇ-ը դյուրացնում է կրթության մեջ ներգրավված բազմաթիվ դերակատարների, ներառյալ մարդկային ռեսուրսների կառավարման բաժինների և գործատուների ներկայացուցիչների միջև հաղորդակցությունն ու համագործակցությունը: Միջազգային մակարդակում այն ապահովում է շնորհվող որակավորումների թափանցիկությունն ու ճանաչելիությունը, ինչպես նաև կրթական գործընթացի հիմնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը: Տվյալ ենթագլխում ներկայացվում է նաև գործատուների ու կրթության կապը, բուհերի և գործատուների փոխհամագործակցության կարևորությունը վերջնարդյունքահենք կրթության արդյունավետ կազմակերպման ու իրականացման տեսանկյունից:

«Որակավորումների ազգային շրջանակին համապատասխան մասնագիտության կրթական ծրագրերի վերջնարդյունքների մշակման գիտամանկավարժական մոտեցումները ՀՀ բուհերում» խորագիրը կրող երկրորդ ենթագլխում քննարկվում են մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) վերջնարդյունքների մշակման մոտեցումները, ինչպես նաև ներկայացվում են ՀՀ 10 բուհերում (Երևանի պետական համալսարան (ԵՊՀ), Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան (ԲՊՀ) (նախկինում՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան (ԵՊԼՀ)), Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (ՀՊՄՀ), Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան (ԵՊԲՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ), Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիա (ՀԳՊԱ), Վանաձորի պետական համալսարան (ՎՊՀ), Գավառի պետական համալսարան (ԳՊՀ), Շիրակի պետական համալսարան (ՇՊՀ), Եվրասիա միջազգային համալսարան (ԵՄՀ)) իրականացված հետազոտության արդյունքները: Հետազոտության նպատակն էր պարզել, թե արդյոք ՀՀ բուհերն ունեն մշակած և հաստատած հայալեզու ուղեցույցներ, որոնցով առաջնորդվում են ՄԿԾ մշակելիս և մասնավորապես կրթական վերջնարդյունքներ ձևակերպելիս:

Սակայն այս առումով ուսումնասիրված բուհերում առկա էին որոշակի խնդիրներ, մասնավորապես.

- ✓ ուսումնասիրված 10 բուհերից 3-ում (ՎՊՀ, ԳՊՀ, ՇՊՀ) առկա չէր ՄԿԾ-ի կամ կրթական վերջնարդյունքների (վերա)մշակման (մեթոդական) փաստաթուղթ (ուղեցույց/ձեռնարկ),
- ✓ ուսումնասիրված 10 բուհերից 2-ում (ԵՊՀ, ՀՊՏՀ) առկա է ՄԿԾ-ների մշակմանն առնչվող մեթոդական փաստաթուղթ, սակայն ՀՀ ՈԱՇ-ին համապատասխան ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների մշակման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումներ և ցուցումներ ներկայացված չեն,
- ✓ ուսումնասիրված 10 բուհերից 2-ում (ԲՊՀ, ԵՊԲՀ) առկա չէ ՄԿԾ-ների մշակմանն առնչվող մեթոդական ներբուհական փաստաթուղթ, սակայն նշված բուհերի ներկայացուցիչները, հանդիսանալով Տեմպուս Ըլայն ծրագրի անդամ, մասնակցել են *ՀՀ ՈԱՇ-ին ՄԿԾ-ների համապատասխանեցման ուղեցույցի* մշակմանը, հետևաբար այս ուղեցույցի կիրառման հավանականությունը մեծ է նշված բուհերում:

- ✓ Հետազոտության համար ընտրված 10 բուհերից 2-ում (ՀՊՄՀ, ՀԳՊԱ) առկա էր ՄԿԾ-ների (վերա)մշակման մեթոդական ուղեցույց/ձեռնարկ, որտեղ ներկայացված են ուղղորդիչ քայլեր ՄԿԾ-ների մշակման համար: Սակայն ՀՊՄՀ ուղեցույցում ներկայացված չէ, թե ինչպես կարելի է մշակել ՀՀ ՈԱՇ-ի համապատասխան մակարդակի բնութագրիչներին համահունչ կրթական վերջնարդյունքներ:

Տվյալ ենթագլխում ներկայացվել են նաև հետազոտական աշխատանքի արդյունքում մշակված մոտեցումները ՄԿԾ-ի վերջնարդյունքներին, ինչպես նաև առաջարկվել է ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքների՝ ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների հետ քարտեզագրման ձևաչափ:

Երրորդ ենթագլխում՝ «Բարձրագույն կրթության ոլորտում շնորհված որակավորումները ՀՀ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցնելու մեխանիզմները», քննարկվում են ՀՀ-ում ծրագրային հավատարմագրման իրականացման նպատակներն ու նմանատիպ փորձերը: Հանգամանորեն ներկայացվում են առաջարկվող այն փուլերը, որոնց իրականացման միջոցով կարելի է շնորհվող որակավորումները համապատասխանեցնել ՀՀ ՈԱՇ-ին: Բարձրագույն կրթության որակավորումները ՀՀ ՈԱՇ-ին համապատասխանեցնելու գործընթացը թիրախավորում է այն որակավորումները, որոնք շնորհվել են ՀՀ-ում ՈԱՇ-ի ընդունումից առաջ, կամ ՈԱՇ-ի ընդունումից հետո, սակայն նախքան որակավորումների մակարդակների բնութագրիչների կիրառումը: Բոլոր շնորհված որակավորումները կարող են ճանաչելի դառնալ ՀՀ ՈԱՇ-ին համապատասխանեցման եղանակով, որը թափանցիկ գործընթաց է և ենթադրում է նաև որակի ապահովման համապատասխան մարմինների կողմից (օրինակ՝ Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ԱՓՇԱՏԿ), Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ)) համաձայնության ձեռքբերումը:

Երրորդ գլուխը՝ **«Որակավորումների ազգային շրջանակի գնահատումը ինքնահավաստման միջոցով»**, բաղկացած է երեք ենթագլուխներից, որտեղ դիտարկվում է որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման դերն ու անհրաժեշտությունը առհասարակ, այնուհետև ներկայացվում են հետազոտության համար ընտրված երեք երկրներում որակավորումների ազգային շրջանակների ինքնահավաստման փորձերը: Մանրամասնորեն ներկայացվում է ՀՀ-ում ինքնահավաստման գործընթացի նախնական փորձը՝ վերլուծելով ինքնահավաստման յուրաքանչյուր չափանիշին առնչվող դրույթները

և ներկայացվում են ինքնահավաստման իրականացմանն առնչվող խոչընդոտները, որոնք առկա են ՀՀ իրականության մեջ: Երրորդ գլխում որպես գիտական նորույթ ներկայացվում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդելը, որը մշակվել է ատենախոսության շրջանակում կատարված հետազոտության արդյունքների հիման վրա:

Առաջին ենթագլխում՝ «Ինքնահավաստման նշանակությունը մասնագիտական կրթության որակի ապահովման ենթատեքստում», քննարկվում է, թե ինչ է ինքնահավաստումը: Ինքնահավաստումն ազգային մակարդակում ՈԱՇ-ի մշակման, գործարկման և ազդեցության վերաբերյալ վերլուծության իրականացումն է ըստ համապատասխան չափանիշների ու ընթացակարգերի՝ հավաստելու տվյալ երկրի ՈԱՇ-ի համապատասխանությունը ԵԲԿՏ ՈՇ-ին: Մանրամասն ներկայացվում են ինքնահավաստման չափանիշներն ու ընթացակարգերը: Քննարկվում է որակավորումների ազգային շրջանակների ու որակավորումների եվրոպական շրջանակի փոխհարաբերությունները՝ կենտրոնանալով ինքնահավաստման գործընթացի կարևորության ու անհրաժեշտության վրա:

Երկրորդ ենթագլխում՝ «Ինքնահավաստման գործընթացի միջազգային փորձը», ներկայացվում է եվրոպական երկրների փորձը, որը տարբերվում է նրանով, որ ԵՄ անդամ երկրներն իրականացնում են ոչ միայն իրենց որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստում, այլ նաև որակավորումների ազգային շրջանակի համապատասխանեցում Որակավորումների եվրոպական շրջանակին, որի համար կան հատուկ մշակված 10 չափանիշներ: Աղյուսակի միջոցով ներկայացվում է ինքնահավաստման և ՈԵՇ-ի հետ համապատասխանեցման չափանիշների համեմատությունը: Տվյալ ենթագլխում մանրամասն քննարկվում և վերլուծության է ենթարկվում Իռլանդիայի, Բելգիայի ու Գերմանիայի որակավորումների ազգային շրջանակների ինքնահավաստման գործընթացները:

Երրորդ ենթագլուխում՝ «ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդելը», վերլուծության է ենթարկվում ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման նպատակով կազմված նախնական զեկույցը, ներկայացվում են հետազոտական աշխատանքի ընթացքում ինքնահավաստման գործընթացի արդյունավետ իրականացմանը խոչընդոտող բացահայտված բացթողումները (Գծապատկեր 1): Ներկայացվում է նաև հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների

հիման վրա որպես գիտական նորույթ մշակված **ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման մոդելը** (Գծապատկեր 2): Առաջարկվող մոդելը կարող է նպաստել տվյալ գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ընթացակարգերի իրականացմանն ու բարելավմանը: Մոդելը մշակվել է հաշվի առնելով ինքնահավաստման գործընթացում ներգրավված կարևոր դերակատարների փոխհամագործակցությունն ու նրանց համապատասխան գործառութային շրջանակները:

Գծապատկեր 1. ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման գործընթացի իրականացման խոչընդոտների համախումբ



Գծապատկեր 2. ՀՀ ՈԱԾ-ի ինքնահավաստման գործընթացի իրականացման մոդել

ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ներգրավված դերակատարները սահմանում են գործընթացի իրականացման հիմնական ուղղությունները, գործողություններն ու ժամկետները:



ԻՆՔՆԱՀԱՎԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ներգրավված դերակատարներն իրականացնում են ՀՀ ՈԱԾ-ի կիրառումը ուսումնական գործընթացում և աշխատաշուկայում՝ կրթական ծրագրերը և աշխատաշուկայի պահանջները համապատասխանեցնելով ՀՀ ՈԱԾ-ի բնութագրիչներին:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտամանկավարժական ու մասնագիտական գրականության, մշակված հաշվետվությունների ու զեկույցների վերլուծության, տեսական ու հետազոտական աշխատանքների, ինչպես նաև ազգային ու միջազգային փորձի մեր հետազոտության արդյունքները հանգեցրել են հետևյալ եզրակացություններին.

1. Որակավորումների ազգային շրջանակների մշակման հիմք են հանդիսանում որակավորումների մետաշրջանակները՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակն ու հարատև կրթության համար որակավորումների եվրոպական շրջանակը, որոնք ապահովում են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում շնորհվող բոլոր որակավորումների թափանցիկությունը, համադրելիությունն ու փոխճանաչելիությունը:
2. ՀՀ որակավորումների ազգային շրջանակի արդյունավետ մշակման համար անհրաժեշտ է հիմք ընդունել որակավորումների մետաշրջանակների բնութագրիչները՝ արտացոլելով ու շեշտադրելով նաև ՀՀ ազգային կրթության առանձնահատկությունները:
3. ՀՀ բուհերում մասնակի են մշակված ու թերի են կիրառվում ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխան կրթական վերջնարդյունքների մշակման վերաբերյալ ներբուհական կանոնակարգային և/կամ մեթոդական փաստաթղթերը: Դրանք անհրաժեշտ են վերջնարդյունքահենք մոտեցմամբ կրթական ծրագրեր մշակելու և աշխատակազմի ու դասախոսական կազմի շրջանում համապատասխան հմտությունները ձևավորելու համար:
4. Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ որակավորումների ազգային շրջանակների կիրառման արդյունավետությունը հնարավոր է ապահովել ազգային մակարդակում կրթության որորտի հիմնական դերակատարների՝ պետություն-բուհ-գործատու, համագործակցության բարձրացմամբ ու ամրապնդմամբ:
5. ՀՀ-ում իրականացված ՈԱՇ-ի ինքնահավաստման փորձը սահմանափակվել է միայն զեկույցի մշակմամբ, մինչդեռ նախքան զեկույցի մշակումը ինքնահավաստման ընթացակարգերի ու չափանիշների հիմնական դրույթների ուղղությամբ համապարփակ

ուսումնասիրություններ, վերլուծություններ և հանրային քննարկումներ չեն իրականացվել՝ ներգրավելով համապատասխան դերակատարներին:

6. Սույն հետազոտական աշխատանքի շրջանակում մշակված ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման մոդելը ներառում է ռազմավարական և գործառնական մակարդակներում ներգրավված անհրաժեշտ դերակատարների ու նրանց փոխհամագործակցության շրջանակը: Սահմանված են յուրաքանչյուր դերակատարին ներկայացվող այն հիմնական գործառույթները, որոնք էականորեն կարող են նպաստել ՈԱՇ-ի արդյունավետ կիրառմանն ու ինքնահավաստմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում՝

1. Մազմանյան Ա., *Որակավորումների եվրոպական շրջանակը որպես որակավորումների ազգային շրջանակների մշակման մեթոդաբանական հենք,* Բանբեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(37), Լինգվա, Երևան, 2016, էջեր 116-132:
2. Մազմանյան Ա., *Բարձրագույն կրթության որակավորումները ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցման գործընթացի կազմակերպման և իրականացման մեխանիզմները,* Բանբեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(37), Լինգվա, Երևան, 2016, էջեր 133-145:
3. Մազմանյան Ա., *ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի և Որակավորումների եվրոպական շրջանակի համադրելիության նախադրյալները*, Բանբեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(39), Լինգվա, Երևան, 2017, էջեր 521-532:
4. Մազմանյան Ա., *ՀՀ որակավորումների ազգային շրջանակի դերակատարությունը մասնագիտական կրթության բարեփոխումների համատեքստում,* Բանբեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(41), Լինգվա, Երևան, 2017, էջեր 80-89:

5. Մազմանյան Ա., *Որակավորումների ազգային շրջանակների մշակման միջազգային փորձի առանձնահատկությունները,* Բանբեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(43), Լինգվա, Երևան, 2018, էջեր 31- 41:
6. Մազմանյան Ա., *Որակավորումների ազգային շրջանակների ինքնահավաստման գործընթացի իրականացման կարևորությունը,* Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման ակադեմիա, N13, «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ, Երևան 2018, էջեր 46-52:
7. Մազմանյան Ա., *ՀՀ ՈԱՇ -ի դերակատարությունը մասնագիտության կրթական ծրագրերի վերջնարդյունքների մշակման գործընթացում,* Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր Պրակ Ա (հումանիտար և հասարակական գիտություններ, դրանց դասավանդման մեթոդիկա), «Սիսմա» ՍՊԸ, Երևան 2018, էջեր 355-368:
8. Մազմանյան Ա., *ՀՀ որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման մոդելի հայեցակարգային դրույթների շուրջ,* Բանբեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(45), Լինգվա, Երևան, 2018, էջեր 25-48:
9. Մազմանյան Ա., *Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստման գործընթացի միջազգային փորձի առանձնահատկությունները,* Բանբեր, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2(45), Լինգվա, Երևան, 2018, էջ 49-62:

МАЗМАНЯН АНИ ГАГИКОВНА

САМОСЕРТИФИКАЦИЯ НАЦИОНАЛЬНОЙ РАМКИ КВАЛИФИКАЦИЙ В РАМКАХ ОБЕСПЕЧЕНИЯ КАЧЕСТВА ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 09.07.2021 в 14:00 на заседании специализированного совета 058 ВАК по педагогике, действующего при ЕГУ. Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52[a], корпус факультета армянской филологии ЕГУ, аудитория N 203.

РЕЗЮМЕ

Актуальность темы. В университетах РА по-прежнему существуют национальные, культурные и институциональные проблемы, препятствующие эффективному и всестороннему применению Национальной рамки квалификаций РА, и эти проблемы не всегда находят отражение в планах и процессах по улучшению. Вышеупомянутые проблемы в основном касаются отсутствия единых механизмов применения Национальной рамки квалификаций РА на национальном уровне, слабого контроля и неопределенности функций ключевых игроков, а также недостаточного сопоставления конечных результатов обучения академических программ с дескрипторами Национальной рамки квалификаций РА. Таким образом, самосертификация Национальной рамки квалификаций РА может способствовать ее эффективному применению на национальном уровне, повышению ее признания на международном уровне и может обеспечить постоянное повышение качества образования в РА.

Цель исследования выявить и обосновать ключевую роль самосертификации Национальной рамки квалификаций РА в процессах постоянного совершенствования обеспечения качества профессионального образования.

Научная новизна исследования.

1. Выявлены взаимосвязь и основные особенности метарамок квалификаций и национальных квалификационных рамок.
2. Выявлены и сопоставлены особенности международной практики разработки национальных рамок квалификаций.

3. Педагогические подходы к разработке результатов обучения в университетах РА в соответствии с Национальной рамкой квалификаций РА были изучены и пересмотрены с новой точки зрения.
4. На основе международного подхода были разработаны новые механизмы, которые дают возможность согласовать квалификации, присваиваемые в сфере высшего образования, с Национальной рамкой квалификаций РА.
5. Выявлены и сгруппированы препятствия на пути к самосертификации Национальной рамки квалификаций РА.
6. Разработана модель самосертификации Национальной рамки квалификаций РА.
7. Определены функции ключевых игроков процесса самосертификации Национальной рамки квалификаций РА с целью разъяснения значимости самосертификации в рамках обеспечения качества профессионального образования.

Теоретическая значимость исследования. По результатам исследования определены роль и значение национальных рамок квалификаций в развитии профессионального образования и обеспечения качества, определены вопросы и особенности развития национальных рамок квалификаций, выявлены проблемы, касающиеся самосертификации национальных квалификаций РА. Полученные результаты послужат дополнением к существующим теориям и педагогическим подходам в данной сфере.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть применены в процессах реформирования высшего образования и могут способствовать всестороннему и эффективному применению Национальной рамки квалификаций РА. Практическая ценность настоящего исследования главным образом отражена в модели, разработанной в результате исследования. В целом модель может быть полезна разработчикам образовательной политики, разработчикам академических программ на уровне высшего и профессионального образования, структурам и специалистам по обеспечению качества образования и другим заинтересованным сторонам.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложения. Общий объем составляет 137 страниц.

ANI GAGIK MAZMANYAN

SELF-CERTIFICATION OF NATIONAL QUALIFICATIONS FRAMEWORK WITHIN THE FRAMEWORK OF PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE

Dissertation for the Scientific Degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01 "Theory and History of Pedagogy". The defense of the dissertation will be held on 9 July, 2021 at 14:00 at the session of the Special Board 058 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) on awarding scientific degrees at Yerevan State University.

Address: 0025, 52a Abovyan str., Yerevan, Yerevan State University, Faculty of Armenian Philology, Room N 203.

SUMMARY

The actuality of the research. In the universities of the Republic of Armenia (RA) there are still national, cultural and institutional problems hindering effective and comprehensive application of the RA National Qualifications Framework and those problems are not always reflected in the improvement plans and processes of the RA universities. The mentioned issues mainly refer to the lack of unified mechanisms for the application of the RA National Qualifications Framework on the national level, poor control and uncertainty of the functions of the key players as well as not sufficient alignment of academic program learning outcomes with the level descriptors of the RA National Qualifications Framework. Thus self-certification of the RA National Qualifications Framework can promote its efficient application on the national level, enhancement of its recognition on the international level and can promote continuous improvement of professional education quality in RA.

The aim of the research is to identify and substantiate the key role of self-certification of the RA National Qualifications Framework in continuous improvement processes of professional education quality assurance.

The scientific novelty of the research.

1. The interconnection and main peculiarities of meta-frameworks of qualifications and national qualifications frameworks were identified.
2. Peculiarities of international practice of the development of national qualifications frameworks were identified and compared.
3. Pedagogical approaches to the development of learning outcomes at RA universities in line with the RA National Qualifications Framework were examined and reviewed from a new perspective.

4. Based on the international approach new mechanisms were developed that give an opportunity to align the qualifications awarded in the sphere of higher education with the RA National Qualifications Framework.
5. Obstacles of self-certification of the RA National Qualifications Framework were identified and classified.
6. Self-certification model of the RA National Qualifications Framework was developed.
7. Functions were defined for the key players of the RA National Qualifications Framework self-certification process in order to clarify the significance of self-certification within the framework of professional education quality assurance.

The theoretical significance of the research. Based on the research outputs, the role and significance of national qualifications frameworks in the development of professional education and quality assurance were clarified, issues and peculiarities of the development of national qualifications frameworks were identified, main problems concerning the self-certification of the RA National Qualifications Framework were analyzed thus enriching the existing theoretical base and pedagogical approaches applied in the current sphere.

The practical significance of the research. The research outputs can be applied in the reformative processes of higher education and can promote comprehensive and effective application of the RA National Qualifications Framework. The practical importance of the current research is especially reflected in the model developed on the basis of the research results. In general, the model can be useful for the education policy developers, academic program developers at vocational and higher education levels, education quality assurance structures and specialists and other parties concerned.

The structure and volume of the dissertation. The dissertation paper comprises an introduction, three chapters, conclusions, list of references and appendix. The volume of the dissertation paper is 137 pages.